

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սեղագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճշշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

(1-4) Կատարել առաջադրանքները.

**1** 15 րոպե 46 վայրկյանը մեկ ժամի ո՞ր մասն է:

- 1)  $\frac{61}{3600}$
- 2)  $\frac{473}{1800}$
- 3)  $\frac{773}{1800}$
- 4)  $\frac{946}{3000}$

**2** Գումարելի հերից մեկը մեծացրել են 11-ով: Ի՞նչպե՞ս պետք է փոխել մյուս գումարելին, որպեսզի գումարը փոքրանա 3-ով:

- 1) մեծացնել 14-ով
- 2) փոքրացնել 8-ով
- 3) փոքրացնել 14-ով
- 4) մեծացնել 8-ով

**3** Գտնել  $|a| < 5$  պայմանին բավարարող  $a$  ամբողջ թվերի քանակը:

- 1) 5
- 2) 9
- 3) 8
- 4) 4

**4** Քանի՞ հատ 3 գումարելի պետք է վերցնել, որպեսզի գումարը ստացվի  $3^5$ :

- 1) 27
- 2) 5
- 3) 240
- 4) 81

(5-8) Գտնել արտահայտության արժեքը.

**5**  $\left(2\frac{1}{2}\right)^2 + \left|\frac{1}{4}\right|$

1) 4

2)  $6\frac{1}{2}$

3)  $4\frac{1}{2}$

4) 6

**6**  $\left(\sqrt{5}\right)^{\log_5 16}$

1) 4

2) 1,4

3) 3

4) 25

**7**  $\tg\left(\operatorname{arcctg}\left(-\frac{\sqrt{3}}{3}\right)\right)$

1)  $-\sqrt{3}$

2)  $-\frac{\sqrt{3}}{3}$

3)  $\sqrt{3}$

4)  $\frac{\sqrt{3}}{3}$

**8**  $2\sqrt[3]{54} - \sqrt[3]{2} \cdot \sqrt[3]{2}$

1) 2

2)  $\sqrt[3]{6}$

3)  $2\sqrt{2}$

4) 4

**(9-12) Կատարել առաջադրանքները.**

**9** Հանի՞ արմատ ունի  $(x^2 + 9)(x^2 - 8x) = 0$  հավասարումը:

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

**10** Գտնել  $\sqrt{(x-8)(x-7)+4} = 2$  հավասարման արմատների միջին թվաբանականը:

- 1) 15
- 2) 8
- 3) 7
- 4) 7,5

**11** Լուծել  $\sin^2 x = 2 \sin x$  հավասարումը:

- 1)  $\pi k, k \in Z$
- 2)  $\pi k, (-1)^k \frac{\pi}{6} + \pi k, k \in Z$
- 3)  $2\pi k, k \in Z$
- 4)  $\emptyset$

**12** Գտնել  $\sqrt{8^{x-1}} = \sqrt[3]{4^{2-x}}$  հավասարման արմատը:

- 1)  $\frac{17}{13}$
- 2) 1
- 3)  $\frac{7}{11}$
- 4) -1,5

**(13-16) Կատարել առաջադրանքները.**

**13** Գտնել  $(x+4)(x-8) < 0$  անհավասարմանը բավարարող թուղթ ամբողջ թվերի գումարը:

- 1) 15
- 2) 22
- 3) 20
- 4) 16

**14** Գտնել  $|3x - 7| \leq 8$  անհավասարմանը բավարարող թուղթ ամբողջ թվերի արտադրյալը:

- 1) 20
- 2) 120
- 3) 24
- 4) 0

**15** Գտնել  $2^{x^2+x} \leq 4^{15}$  անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:

- 1) 4
- 2) 5
- 3) 7
- 4) 6

**16** Լուծել  $x \leq 3 \cdot 5^{\log_5 x} + 10$  անհավասարումը:

- 1)  $(0; +\infty)$
- 2)  $[-5; +\infty)$
- 3)  $[-5; 0) \cup (0; +\infty)$
- 4)  $[0; +\infty)$

(17-20) Նույն արտադրողականությամբ աշխատող 6 տրակտորը 6 ժամում վարում է 6 հա:

**17** Քանի՞ հեկտար կվարի այդպիսի 15 տրակտորը 8 ժամում:

- 1) 18
- 2) 36
- 3) 20
- 4) 24

**18** Այդպիսի քանի՞ տրակտոր է անհրաժեշտ, որպեսզի 3 ժամում վարեն 4 հա:

- 1) 9
- 2) 8
- 3) 10
- 4) 12

**19** Այդպիսի 5 տրակտորը քանի՞ ժամում կվարի 10 հա:

- 1) 10
- 2) 8
- 3) 9
- 4) 12

**20** Քանի՞ հեկտար կվարեն երկու անգամ մեծ արտադրողականություն ունեցող 9 տրակտորը 10 ժամում:

- 1) 30
- 2) 15
- 3) 20
- 4) 25

**(21-24) Կատարել առաջադրանքները.**

**21**

$(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում  $a_1 = 11, d = -0,6$ : Գտնել այդ պրոգրեսիայի ամենամեծ բացասական անդամը:

- 1) -4
- 2) -0,4
- 3) -1
- 4) -2,2

**22**

$(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում  $a_1 = 11, d = -0,6$ : Գտնել այդ պրոգրեսիայի ամենափոքր դրական անդամը:

- 1) 3
- 2) 1,4
- 3) 0,8
- 4) 0,2

**23**

$(b_n)$  Երկրաչափական պրոգրեսիայում  $b_2 = 243, b_5 = 9$ : Գտնել այդ պրոգրեսիայի բոլոր այն անդամների քանակը, որոնք մեծ են  $\frac{1}{9}$ -ից:

- 1) 8
- 2) 5
- 3) 6
- 4) 7

**24**

$(b_n)$  Երկրաչափական պրոգրեսիայում  $b_2 = 243, b_5 = 9$ : Գտնել այդ պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 1-ի:

- 1) 9
- 2) 10
- 3) 7
- 4) 8

(25-28) Տրված է  $f(x) = \frac{4x}{x^2 + 4}$  ֆունկցիան:

**25** Գտնել  $f$  ֆունկցիայի ածանցյալը:

1)  $\frac{3x^2 + 4}{(x^2 + 4)^2}$

2)  $\frac{2}{x}$

3) 2

4)  $\frac{4(4 - x^2)}{(x^2 + 4)^2}$

**26** Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերի քանակը:

1) 4

2) 1

3) 2

4) 3

**27** Գտնել  $f$  ֆունկցիայի աճման միջակայքերը:

1)  $(-\infty; 2]$

2)  $[-2; 2]$

3)  $(-\infty; -2] \cup [2; +\infty)$

4)  $[-2; +\infty)$

**28** Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:

1) 2

2) -1

3) 1

4) 4

(29-32)  $ABC$  ուղղանկյուն եռանկյան  $C$  ոլիղ անկյան զագարից տարված  $CH$  բարձրությունը 12 սմ է,  $AC$  եղթ՝ 20 սմ:

**29** Գտնել  $AH$ -ը:

- 1) 20 սմ
- 2) 9 սմ
- 3) 16 սմ
- 4) 4 սմ

**30** Գտնել  $AC : BC$  հարաբերությունը:

- 1)  $2 : 3$
- 2)  $4 : 3$
- 3)  $3 : 4$
- 4)  $5 : 3$

**31** Գտնել  $ACH$  եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը:

- 1) 4 սմ
- 2) 3 սմ
- 3) 7,5 սմ
- 4) 6 սմ

**32** Գտնել  $AK : KH$  հարաբերությունը, եթե  $CK$ -ն  $ACH$  եռանկյան  $C$  զագարից տարված կիսորդն է:

- 1)  $4 : 5$
- 2)  $5 : 3$
- 3)  $5 : 4$
- 4)  $3 : 5$

(33-36) Կոնի կողմնային մակերևույթի փովածքը 24 սմ տրամագծով կիսաշրջան է:

**33** Գտնել կոնի ծնորդի երկարությունը:

- 1) 24 սմ
- 2) 8 սմ
- 3) 12 սմ
- 4) 18 սմ

**34** Գտնել կոնի հիմքի շառավղի երկարությունը:

- 1) 12 սմ
- 2) 9 սմ
- 3) 4 սմ
- 4) 6 սմ

**35** Գտնել կոնի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1)  $432\pi$  սմ<sup>2</sup>
- 2)  $108\pi$  սմ<sup>2</sup>
- 3)  $48\pi$  սմ<sup>2</sup>
- 4)  $243\pi$  սմ<sup>2</sup>

**36** Գտնել կոնի ծնորդի և բարձրության կազմած անկյունը:

- 1)  $90^0$
- 2)  $30^0$
- 3)  $60^0$
- 4)  $45^0$

(37-40) Տրված են  $ABCD$  զուգահեռագծի  $A(2; 2)$ ,  $B(9; 2)$  և  $D(1; -4)$  գագաթները:

**37** Գտնել զուգահեռագծի  $C$  գագաթի արացիսը:

**38** Գտնել զուգահեռագծի  $AD$  կողմի երկարության քառակուսին:

**39** Գտնել զուգահեռագծի մակերեսը:

**40** Գտնել  $\overrightarrow{AM}$  և  $\overrightarrow{AC}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը, որտեղ  $M$ -ը զուգահեռագծի  $A$  գագաթից  $DC$  կողմին տարված բարձրության հիմքն է:

$$(41-44) \text{ Տրված է } \begin{cases} \sqrt{3+x} \leq 3\sqrt{2} \\ \sin \pi x = \sqrt{5} \cos \frac{\pi x}{2} \end{cases} \text{ համակարգը:}$$

- 41** Գտնել համակարգի անհավասարմանը բավարարող թուղթ ամբողջ թվերի քանակը:
- 42** Քանի՞ արմատ ունի համակարգի հավասարումը  $[0; 12]$  միջակայքում:
- 43** Քանի՞ լուծում ունի համակարգը  $[0; 20]$  միջակայքում:
- 44** Քանի՞ լուծում ունի համակարգը:

**45**

**Տրված է  $f(x) = \sqrt{18 - x^2} - |x|$  ֆունկցիան:**

Ծի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

- 1)  $f(x)$ -ը զույգ ֆունկցիա է:
- 2)  $f(x)$  ֆունկցիայի մեծագույն արժեքը փոքր է 4-ից:
- 3)  $f(x)$  ֆունկցիայի որոշման և արժեքների տիրույթները համընկնում են:
- 4) Գոյություն ունի 6 երկարությամբ միջակայք, որտեղ  $f(x)$  ֆունկցիան ընդունում է միայն ոչ բացասական արժեքներ:
- 5)  $f(x)$  ֆունկցիան  $[-2; 1]$  միջակայքում աճող է:
- 6) Գոյություն ունի  $f(x)$  ֆունկցիայի գրաֆիկի այնպիսի շոշափող, որն արցիսների առանցքի հետ կազմում է  $40^\circ$  անկյուն:

## Բ մակարդակ

- (46-49)  $M$  վայրից դեպի  $N$  վայրը շարժվեց հեծանվորդը, միաժամանակ  $N$ -ից դեպի  $M$  շարժվեց հետիւտնը: Շարժումը սկսելուց 1 ժամ հետո հետիւտնը հանդիպեց հեծանվորին և շարունակելով ճանապարհը,  $3\frac{1}{3}$  ժամ անց հասավ  $M$  վայրը:

- 46** Շարժումը սկսելուց քանի՞ րոպէ հետո հեծանվորդը հանդիպեց հետիւտնին:
- 47** Հետիւտնի արագությունը հեծանվորդի արագությունից քանի՞ տոկոսով է փոքր:
- 48** Քանի՞ րոպեում հեծանվորդն անցավ  $MN$  ճանապարհը:
- 49** Ճանապարհի ո՞ր տոկոսն էր անցել հետիւտնը՝ հեծանվորդի  $N$  հասնելու պահին:

(50-53) *ABC* հիմքով  $DABC$  բուրգի  $D$  գագաթին հարակից բոլոր հարթ անկյուններն ուղիղ են: Հայտնի է, որ  $DA=9$ ,  $DB=12$ , իսկ բուրգի ծավալը՝ 648:

**50** Գտնել  $ADB$  նիստի  $D$  գագաթից տարված միջնագծի երկարության կրկնապատիկը:

**51** Գտնել  $DC$  կողի երկարությունը:

**52** Գտնել  $DABC$  բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը:

**53** Գտնել բուրգին արտագծված գնդային մակերևույթի տրամագիծը:

(54-57) Գտնել արտահայտության արժեքը.

54  $\frac{\sqrt{ab^3} + \sqrt{a^3b}}{-a\sqrt{ab}}$ , եթե  $a = -\frac{1}{7}$ ,  $b = -\frac{5}{7}$ :

55  $48xy^2 - 64y^3 - 12x^2y + x^3$ , եթե  $x = 4$  և  $y = -0,75$ :

56  $a^2 + 16bc + 8c^2 - (2b + 3c)^2 + 2$ , եթե  $a, b, c$  հաջորդականությունը թվաբանական պլողելիք է:

57  $12 \sin^2 \left( \frac{1}{2} \arccos \frac{1}{6} \right)$ :

(58-61) Տրված է  $f(x) = 6\sqrt{2} \cos\left(3x + \frac{\pi}{4}\right)$  ֆունկցիան:

**58** Գտնել  $f(x)$  ֆունկցիայի ամենամեծ ամքող արժեքը:

**59** Գտնել  $f(x)$  ֆունկցիայի ածանցյալը  $x = -\frac{\pi}{6}$  կետում:

**60** Գտնել  $6|\cos T|$  արտահայտության արժեքը, որտեղ  $T$ -ն  $f(x)$  ֆունկցիայի հիմնական պարբերությունն է:

**61**  $f(x)$  ֆունկցիան քանի՞ զրո ունի  $\left[\frac{\pi}{2}; \frac{9\pi}{4}\right]$  միջակայքում:

(62-63) Դիցուք, A -ն 1-ից մինչև 20 բնական թվերի բազմությունն է:

**62** Քանի՞ եղանակով կարելի է այդ բազմությունից ընտրել երեք թիվ այնպես, որ դրանց գումարը լինի զույգ թիվ:

**63** Քանի՞ եղանակով կարելի է այդ բազմությունից ընտրել երկու թիվ այնպես, որ դրանց արտադրյալը լինի 3-ի բազմապատիկ:

**64**

Տրված է  $a$  պարամետրով  $6^{1-x^2} = a^2 + a$  հավասարումը:

Ճիշտ են արդյոք հետևյալ պնդումները:

- 1)  $a = -3$  դեպքում հավասարումն ունի միակ արմատ:
- 2) Եթե  $a \in (-1; 0)$ , ապա հավասարումն արմատ ունի:
- 3) Ցանկացած  $a > 2$  դեպքում հավասարումն արմատ չունի:
- 4)  $a < -3$  դեպքում հավասարումն արմատ չունի:
- 5) Ցանկացած  $a \in (0; 2]$  դեպքում հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:
- 6)  $a \in (-3; -1)$  դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:

**65**

Շրջանագծին ներգծած  $ABCD$  սեղանի  $BC$  փոքր հիմքը հավասար է սրունքին, իսկ բութ անկյունը՝  $108^\circ$ : Սեղանի անկյունագծերը հատվում են  $E$  կետում:

Ծի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

- 1)  $ABC$  անկյան կիսորդն անցնում է սեղանին արտագծած շրջանագծի կենտրոնով:
- 2)  $\angle ACB = 54^\circ$ :
- 3) Սեղանին արտագծած շրջանագծի կենտրոնը գտնվում է սեղանի ներքին տիրույթում:
- 4)  $AD > BD$ :
- 5)  $A$  կետի հեռավորությունը  $BD$  ուղղից փոքր է սեղանի բարձրությունից:
- 6)  $AED$  եռանկյունը հավասար է  $ABC$  եռանկյանը: